**Առակը ցոյց է տալիս՝**

1. **Ինչպէս ապաշխարել արձակուել մեղքերից**
2. **Մեր բնութիւնը**

   Անհամբեր

3. **Աստուծոյ բնութիւնը**

   Համբերատար

**Կրտսեր Որդիին Խնդիրը՝**

1. **Ո՞վ է**
2. **Ի՞նչն է ուզեում**

   A. Շուտ ժառանգել հօր ստացուածքից

   B. Կտրել հայրից

**12 Հայրը ինչո՞ւ տալի՜ս է ժառանգութիւնը**:

**13 Այս «հեռու երկիր»ը ի՞նչ է**:

1. **Ոչ որ չգիտի ինձ**:
2. **Կառող եմ պահուտիլ, ծածկուիլ, գաղտնի մնալ**:
3. **Կարող եմ անել ինչ որ ուզում եմ**:
4. **Կատարել իմ ցանկութիւններս, տռփանքներս**:
5. **Ինքնուրոյն կենտրոնացած եմ**:
6. **Էգո-կենտրոնական եմ**:
7. **Հեռու եմ ինձնից**:
8. **Հեռու եմ իմ տնից**:
9. **Թողել եմ իմ խելքը**:

**13 Ի՞նչ եմ գտնում այս երկրումը:**

1. **Քաղցածութիւն, ծարաւութիւն:**
2. **Կարիք, պակասութիւն, դատարկութիւն:**
3. **Միայնակութիւն, մեկուսացում:**
4. **Տխրութիւն, ցաւ, վիշտ:**

**14 «Սաստիկ սով»ը ի՞նչ է:**

1. **Ցանկանում էր լիանալ, լցուել ամէն ինչով:**
   A. Բայց ամէն ինչ կորցրեց:
   B. Սա օրէնքն է, բացառութիւն չէ:
      Ով որ իր անձը ուզէ ապրեցնել, կ'կորցնէ նորան, եւ ով որ իր անձը կորցնէ ինձ համար՝ կ'գտնէ նորան:
      (Մատթէոս 16:25)
2. **Այն օտար եկիրը նուազ, թոյլ, աւրուած է:**

**15 «Այն երկրի քաղաքացին» ո՞վ է:**

1. **Ներկայացուցիչը «Իշխան Աշխարհ»ի**

**15 «ագարակը՝ խոզեր արածեցնելու» ի՞չն է:**

1. **Խոզեր՝ աղտեղութիւն**
2. **Արածեցնել՝ պղծութեան ծառայ է դարցել:**

**16 «եղջերենի պտուղը»**

1. **վաւաշոտ, լկտի ցանկութիւններ**
2. **Նկատէք որ՝ եղջերենի պտուղի սերմերը սննդաւոր մասը քիչ է:**
   A. Պտուղը կարծես նման է եւ կոչվում է «ծեր մարդի գարշահոտ ոտք»:
   B. Սերմերի պատիճը նման է խոշոր, գէր ոտքի բթամատ:
   C. Կեղեւը կարծր է եւ հեշտ չէ կոտրել:
   D. Սերմերի շրջի մասից գէշ հոտ է գալիս:

E. Ներքին նիւթը չոր, մազոտ, փոշի եւ դեղին է:

F. Երբ կեղեւը բաց է, ազատւում է հոտը, որը կարելի է ասել, որ պարզապէս անտանելի է:

G. Պտուղը պատմական գրականութեան մէջ գործածւում է կախարդութեան եւ դիւթութեան համար:

**17 խելքի եկաւ: Մեղաւոր է զգում:**

1. **Համեմատեց իր իրականութիւնը Աստուծոյ ժողովրդի հոյակապ նկարին:**
2. **Ճանաճեց իր նուաստ վիճակը:**
   A. Ես եմ՝ անջատ, մեկուսի, սոված, քաղցած, ամօթահար, խայտառակուած:
   B. Իմ հօրս ծառայներն են՝ միացեալ, մի մարմին, կուշտ, լի, շատ լաւ են զգում, փառաւոր:
3. **Նա մեղաւոր էր զգում**
   A. Մեղաւոր զգալ՝ լաւ բան չի:
   B. Առանձնապէս՝ անօգուտ է:
   C. Պարզապէս՝ սկզբնական պահ է:
   D. Օգտակար է որպէս՝ առաջի քայլ ազատուիլ մեղաւոր զգացութիւնից:
   E. Պէտք չունեմ ապրել բնակել ընկղմուել թաղուել մեղաւորութեան մէջ:
   Աւելի լաւ է ընկղուել ապաշխարութեան՞ ջրերի մէջ:

**17-19 Խոստովանեց ինքն իրեն:**

17 Ապա խելքի եկաւ եւ ասաց. “Քանի՞ վարձու աշխատաւորներ կան իմ հօր տանը, որ առատ հաց ունեն, եւ ես այստեղ սովամահ կործւում եմ: 18 Վեր կենամ գնամ իմ հօր մօտ եւ նրան ասեմ. հա՛յր, մեղանչեցի երկնքի դէմ ու քո առաջ 19 եւ այլեւս արժանի չեմ քո որդին կոչուելու, ինձ վերցրո՛ւ իբրեւ քո աշխատաւորներից մէկը”:
(Ղուկաս 15:17-19)

1. **խելքի եկաւ**։
2. **Ինքն իրան եկաւ**։
3. **Ընդունում է իր մեղքը եւ իրավիճակը մանրամասն**։

**19 Խնդրում է փոփոխութեան համար**

ինձ վերցրո՛ւ իբրեւ քո աշխատաւորներից մէկը

*✝ Հայրը չթողեց որ շարունակի ✝*

**20 Վեր կացաւ, գնաց իր հօր մօտ**։

1. **Մարդը պատկանում է՝ հոգի, միտ, եւ մարմին**։
2. **Մտածելը բաւարար չէ մարդ փոխել**։
   Այս ժողովուրդը իր իր շրթունքներովն են ինձ պատւում, իսկ նորանց սիրտը հեռու է ինձանից:
   (Եսայայ 29:13)

   27 Վա՜յ ձեզ կեղծաւորներիդ՝ դպիրներիդ եւ փարիսեցիներիդ, որ նման էք սպիտակեցրած գերեզմանների, որոնք դրսից գեղեցիկ են երեւում, մինչ ներսից լի են մեռելների ոսկորներով եւ ամենայն ապականութեամբ: 28 Նոյնպէս եւ դուք, դրսից մարդկանց արդար էք երեւում, մինչ ներսից լի էք կեղծաւորութեամբ եւ անօրէնութեամբ:
   (Մատթէոս 23:27-28)

**20 Հայրը տեսնում է իրեն հեռուից**։

Եւ վեր կացաւ եկաւ իր հօր մօտ. եւ մինչ դեռ հեռու էր, հայրը տեսաւ նրան եւ գթաց. վեր կացաւ եւ վազեց նրան ընդառաջ, ընկաւ նրա պարանոցով եւ համբուրեց նրան:
(Ղուկաս 15:20)

1. **The son took the first step**
2. **The second step is hard.**
3. **Father ran and “fell on his neck”**
   A. Incarnation
   B. Kiss of love
   C. Cross

**21 Խոստովանեց իր հօր եւ երկնքի առաջ**:
Եւ որդին ասաց նրան. “Հա՛յր, մեղանչեցի երկնքի դէմ եւ քո առաջ, այլեւս արժանի չեմ քո որդին կոչուելու”:
(Ղուկաս 15:21)

**22-24 Պարգեւներ**

1. **Նախկին պատմուճանը**
   “Դուք բոլորդ, որ ի Քրիստոս մկրտուեցիք, Քրիստոսով զգեստաւորուեցիք.:”
   (Գաղատացիներ 3:27)
2. **Մատանին**
   “Աստուած օծեց եւ կնքեց մեզ եւ Հոգու առհաւատչեան դրեց մեր սրտերի մէջ:”
   (2 Կորնթացիներ 1:21-22)
3. **Կօշիկներ**
   “Ձեր ոտքերը ամրացրէ՛ք խաղաղութեան Աւետարանի պատրաստութեամբ:”
   (Էփեսացիներ 6:15)
4. **Feast**
   “Այս է հացը, որ երկնքից է իջած. ոչ այնպէս, ինչպէս մանանան, որը ձեր հայրերը կերան եւ մեռան. ով այս հացն ուտում է, կ’ապրի յաւիտեան:” (Յովհաննէս 6:59)

**25-32 Իսկ անդրանիկ որդին՞**
25 Իսկ նրա աւագ որդին ագարակում էր. եւ մինչ գալիս էր եւ տանը
մօտեցաւ, լսեց երգերի եւ պարերի ձայնը. 26 եւ իր մօտ կանչելով
ծառաներից մէկին՝ հարցրեց, թէ այդ ի՞նչ է: 27 Եւ սա նրան ասաց.
“Քո եղբայրը եկել է, եւ քո հայրը մորթեց պարարտ եզը, որովհետեւ
ողջ առողջ ընդունեց նրան”: 28 ՆԱ ԲԱՐԿԱՑԱՒ ԵՒ ՉԷՐ [ՈՒԶՈՒՄ]
ՆԵՐՍ ՄՏՆԵԼ. իսկ հայրը դուրս ելնելով՝ աղաչում էր նրան: 29 Որդին
պատասխանեց եւ ասաց հօրը. “Այս քանի՜ տարի է, որ ծառայում եմ
քեզ եւ երբեք քո հրամանները զանց չեմ արել. ինձ երբեք մի ուլ
չտուիր, որ բարեկամներիս հետ ուրախութիւն անէի: 30 Երբ եկաւ քո
այդ որդին, որը քո ունեցուածքը կերաւ պոռնիկների հետ, պարարտ
եզը նրա համար մորթեցիր”: 31 Հայրը նրան ասաց. “Որդեա՛կ, դու
միշտ ինձ հետ ես, եւ ամէն ինչ, որ իմն է, քոնն է. 32 բայց պէտք էր
ուրախ լինել եւ ցնծալ, որովհետեւ քո այս եղբայրը մեռած էր եւ
կենդանացաւ, կորած էր եւ գտնուեց:
(Ղուկաս 15:25-32)

1. **Նա միթէ լաւ՞ է:**
2. **ՈՉ՜: ԿՈՐՑՈՒԱԾ Է: ԿՈՐՑՐԵԼ Է:**

**Եզրակացութիւն**

1. **Ոչինչ չի գոհացնում, կշտացնում**
   - A. Բացի մեր ճշմարիտ Երկնւոր Հայրը, Եռամի Աստուածը:
   - B. Նա կարող է բոլոր մեր անկիւնները լցնել:
   - C. Նա ստեղծել է մեզ իր «պատկերով եւ նմանութեան», այսինքն՝
     Աստուած ասեց. Մեր պատկերովը եւ մեր նմանութեան պէս մարդ շինենք: (Ծննունդք 1:26)
     - i. Ազատ կամքով,
     - ii. Երրեակ եւ մի,
     - iii. Մարմին, հոգի, միտ:
   - D. Հետեւաբար, մարմնաւոր, նիւթական կերակուրը միայն մեր մարմնաւոր, նիւթական ստամոքսը կարող է լցնել:
   - E. Մեր բանաւոր ստամոքսի համար (ուղեղ, միտք, մտածումներ)՝ բանաւոր սնունդ է պէտք:
   - F. Մեր հոգեւոր ստամոքսի համար (սիրտ, հոգի, զգացումներ)՝ հոգեւոր սնունդ է պէտք:
2. **Քրիստոնէութիւնը**
   - A. Փոփոխութեան փորձն է:
   - B. Ոչ միայն վարդապետութիւններ:
   - C. Ոչ ընդունել որոշ բաններ:
   - D. Ամէնօրեայ կեանքն է փոփոխութեան:
     Աճում, զարգացում, բերք:
   - E. Վերադառնալ այն պատկերին որ՝
     - i. Սկիզբից կորցրել եմ:
     - ii. Աստուած տուել է ինձ:

## 3. Ապաշխարութիւն

A. Քրիստոնէութեան հիմնական գաղափար:

B. Μετάνοια «Մետանոիա» «Նոր Միտ»

C. Նորից մտածել, տարբեր մտածել:

D. Ուղութիւն փոխել:

i. Գալ Խելքի

ii. Գնալ Հայրին՝

a. Բնական հայրին (մարմին, փոշի, հող, երկիր)

b. Հոգեկան հայրին (իմաստ, ջուր, մկրտութիւն)

c. Երկնաւոր հայրին (Սուրբ Հոգին, միւրոն, օծում)

## 4. Ինչպէս ապաշխարել

A. Հանգիստ մտածելու ժամանակ

B. Ազնիվ վերագնահատում

C. Որոշում կայացիր

i. Ի՞նչ անեմ:

a. Դադրեմ կերակրել խոզեր:
«ԱՒԵՐԱԾԻ ՊՂԾՈՒԹԻՒՆԸ»
Դանիէլ 11:31; 12:11
Մատթէոս 24:15
Մարկոս 13:14

b. Վերադառնամ հօրս մօտ:

ii. Երբ անեմ:

a. Այս որոշումը ՊԷՏՔ ՉԷ ՅԵՏԱՁԳԵԼ:

b. Երբ իմանամ յանցանքս

1) Այս քայլը պէտք է անեմ:

2) ԱՅՍՕՐ ~ ԱՅԺՄ ~ ՀԻՄԱ

3) ՈՉ ՅԵՏՈՅ ~ ՈՉ ՎԱՂԸ

c. Եթէ սպասեմ

1) Կորցնելու եմ:
2) Կործանուելու եմ:

D. Խոնարհութիւն (Սխալ եմ արել) (ԽԱԶ):
E. Մի յետաձգիր, ոչ մի վայրկեան մի կորցրիր:
F. Վեր կաց, առանց ուշացնելու:

**5. Ազնիւ հաշտութիւն (հաշտեցում)**

Մօտեցիր Դիմաւորիր . . .

A. Ինքդ քեզ («Մեղայ»)
B. Հարեւանդ («Մեղայ»)
C. Հայրդ (Խոստովանահայրդ)
D. Երկնաւոր Հայրդ